

ԱՃԱԿԱՆՆԵՐԻ ՄԱԿՔԱՅԱՑՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱՇՈՒՆ ՄԻՋՈՑ

• Ժամանակակից ֆրանսերենին բնորոշ է մակբայների թվի ավելացումն ի հաշիվ խոսքի այլ մասերի: Բառերի անցումը մեկ խոսքի մասից մյուսը, այսինքն խոսքիմասային փոխանցումը, հայտնի է եղել դեռևս լատիներենում: Սակայն երևույթին առնչվող շատ հարցեր մինչև այսօր էլ վիճահարույց են: Այդ մասին է վկայում, թեկուզ, այն անվանող տերմինների բազմազանությունը. *transposition* կամ *translation* (փոխանցում, Շ. Բալլի, Լ. Տենյեր), *derivatıon impropre* (անիսկական բառակազմություն, Ֆ. Բրյունո, Մ. Գրևիս), *conversion* (փոխակարգություն, Ա. Սմիռնիցկի, Վ. Գալ, Յու. Ստեպանովա):

Գործառական փոխանցման բնորոշ օրինակ է ածականների մակբայացումը: Ածականների մակբայական կիրառությունը վկայում է ժամանակակից ֆրանսերենի համակարգային մի կարևոր առանձնահատկության՝ *-ment* ածանցով մակբայների կիրառությունից խուսափելու մասին, որի շնորհիվ բազմաթիվ ածականներ հարստացրել են մակբայների կարգը. *tenir bon* (հաստատական լինել), *parler bas* (ցածրաձայն խոսել), *travailler ferme* (շատ աշխատել), *boire frais* (սառը վիճակում խմել), *refuser net* (կտրուկ մերժել), *rire jeune* (կեղծ՝ բռնազբոս ծիծաղել), *manger gras* (յուղոտ բաներ ուտել) և այլն:

Ուսումնասիրելով ֆրանսիացի ժամանակակից հեղինակների և ֆրանսիական մամուլի նյութերը, համոզվում ենք, որ ածականների մակբայական կիրառության շրջանակները շարունակ ընդլայնվում են: Մի կողմից, ավելի ու ավելի շատ ածականներ են հանդես գալիս մակբայաբար, մյուս կողմից, նորանոր բայեր են մակբայացած ածականների հետ զուգորդվում: Մինչդեռ ժամանակակից ֆրանսերենում գոյություն ունեցող ոչ բոլոր գործառական մակբայներն են գրանցված բառարաններում:

Ածականների մակբայացումը լայն տարածում գտավ հատկապես անցյալ դարի 70-ական թվականներին, երբ մի ամբողջ շարք ածականներ գործառական փոխանցման շնորհիվ հարստացրին մակբայների կարգը: Այսպիսով,

ածականների մակբայացման գործընթացը XX դարի երկրորդ կեսին բնորոշ լեզվական առաջընթաց երևույթ է, որը սակայն քիչ է ուսումնասիրված ֆրանսերենում: Լեզվաբանների կարծիքով հատկապես գովազդի լեզուն է նպաստել նրան, որ մակբայացած ածականները լայն կիրառություն ստանան ժամանակակից ֆրանսերենում: «Սկզբում երկչոտ կերպով, չակերտների մեջ, - գրում է Մ. Գալյոն, ի հայտ էին գալիս այնպիսի բառակապակցություններ, ինչպիսիք են *manger « triste » (sans moutarde)*, *manger « gai » (avec moutarde)* (տխուր ուտել՝ առանց մանանեխի, ուրախ ուտել՝ մանանեխով), այնուհետև արդեն առանց չակերտների, կարծես հենց այդպես էլ պետք է լիներ. *Persil lave plus blanc, souriez jeune* (Պերսին ավելի ճերմակ (մաքուր) է լվանում, ժպտացե՛ք երիտասարդի պես):¹ Պաշտպանելով նման բառակապակցությունների կիրառությունը, Օ. Սովաժոն ընդգծում է, որ *jardinez moderne* (զբաղվե՛ք այգեգործությամբ ժամանակակից ձևով) տիպի կառույցները, ուր ածականն անմիջականորեն միանում է բային, հնուց ի վեր գոյություն ունեն ֆրանսերենում և քերականական տեսանկյունից ճիշտ են, այսինքն՝ ընդունված են որպես ֆրանսերենին բնորոշ լեզվական կանոն: «Այն, ինչ զարմացնում է զբոսաշրջիկներին *buvez utile* (ըմպելիքը խմե՛ք օգտակար ձևով, բառացի՝ օգտակար խմե՛ք) կամ *achetez français* (ֆրանսիական ապրանքներ գնե՛ք, բառացի՝ ֆրանսիական գնե՛ք) կապակցություններում, - գրում է Օ. Սովաժոն, - կառույցն ինքը չէ, քանի որ այն հաճախ է հանդիպում, այլ այն, որ դրանցում երկու բառերը կապակցվում են առաջին անգամ: Հենց այդ նորամուծությունն է մեզ շփոթեցնում»:²

Օ. Սովաժոն գտնում է, որ *jardinez moderne* տիպի կառույցներն ավելի արդյունավետ, կարճ և գեղեցիկ են, քան *jardinez d'une manière moderne* ձևերը:

Մակբայացած ածականների մասին խոսելիս, կարևոր ենք համարում առանձնացնել այն պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մակբայացումը: Այդ առիթով Տ. Ռեպինան գրում է. «*Droit* (ուղիղ), *ferme* (ամուր), *net* (կտրուկ),

¹ С. М. Потапов. К вопросу об омонимах. Уч. зап. Вильнюсского ун.-та, XXVI, языкознание, I. 1958, стр. 432.

² A. Sauvageot. Jardinez moderne. Vie et langage. N 209, 1969, p. 480.

сру (կոպիտ, կտրուկ, չոր, շիփ-շիտակ) և այլ ածականներ ցույց են տալիս գործողության հատկանիշ, անփոփոխ են, այսինքն՝ չեն համաձայնում ստորոգյալի հետ և նախադասության մեջ լինում են ձևի պարագա»:³ Այլ կերպ ասած՝ վերոհիշյալ ածականներն օժտված են մակբայներին հատուկ հիմնական հատկանիշներով: Սակայն, այս հատկանիշների առկայությունը բավարար չէ այդ ածականները մակբայների կարգը դասելու համար:

Որպեսզի կարողանանք ասել, որ ածականն ամբողջովին մակբայացել է, անհրաժեշտ է, որ այն զուգորդվի որոշակի թվով բայերի հետ՝ անկախ վերջիններիս իմաստից: Եվ իրոք, այսօր արդեն *sec* (չոր), *jeune* (երիտասարդ), *trouble* (աղոտ, ոչ հստակ), *utile* (օգտակար), *сру* (կոպիտ, կտրուկ, չոր, շիփ-շիտակ) և այլ գործառական մակբայներ բառակապակցություններ են կազմում ամենատարբեր իմաստային խմբերի պատկանող բայերի հետ, որն ընդգծում է նրանց անկախությունը սկզբնական կապակցության բայերից: Օրինակ,

voter utile (օգտավետ քվեարկել) - *Le parti vous appelle voter utile.*⁴

voir rouge et trouble (կարմիր և ոչ հստակ՝ աղոտ տեսնել) - *Il vit rouge et trouble, toutes les veines de ses yeux se gonflèrent de sang.*⁵

habiller ieune (երիտասարդական ոճով հագցնել) - *L'ennui pour vous, c'est qu'il habille un peu jeune.*⁶

penser sec (արագ, անմիջապես մտածել) - *Bouton pensa aussi sec : „Il faut mentir.“*⁷

chercher profond (խորը փնտրել) - *Au plongeur qui va chercher le corail de plus en plus profond, on le lui paye 30 F le kg.*⁸

Այսպիսով, որքան լայն է այս կամ այն ածականով լրացվող բայերի շրջանակը, այնքան այդ ածականը հեռացած է ածականների կարգից, և ավելի շատ հիմքեր կան այն մակբայների կարգը դասելու համար: Եվ ընդհանրապես,

³ Т. А. Репина. Обогащение наречий за счет прилагательных в современном французском языке. Уч. зап. ЛГУ, серия фил. наук, вып. 35, N 232, Л., 1958, стр. 43.

⁴ Գովազդից:

⁵ P. Dubois. La chaussée des géants. P., 1958.

⁶ F. Valmain. Illégitime défense. P., 1961.

⁷ A. Dhôtel. Le pays où l'on n'arrive jamais. P., 1961.

⁸ Գովազդից:

որքան ածականը «զգայուն» է բառիմաստի նկատմամբ, այնքան մեղ է նրանով լրացվող բայերի շրջանակը, և այնքան քիչ հիմքեր կան վերջինս մակբայների շարքը դասելու համար:

Ածականների մակբայական փոխանցման մեկ այլ չափանիշ էլ մակբայացած ածականները -*mont* ածանցով կազմված մակբայներով փոխարինելու հնարավորությունն է: Օրինակ, *parler haut* և *parler bruyamment*.

Մի շարք ածականներ էլ, ինչպես *frais*, *ferme*, *cru*, *sec*, *haut* և այլն, համապատասխան մակբայների կազմության ելակետային միավորներ են և մասնակցում են թե՛ բառաածանցմանը, թե՛ փոխանցմանը: Արդյունքում ստացվում են իմաստով մոտ, բայց ոչ նույնական մակբայների զույգեր, օրինակ, *sec - sèchement*, *haut - hautement* և այլն:

Լեզվի համակարգում իմաստով մոտ այդպիսի մակբայների միաժամանակյա գոյությունը բացատրվում է նրանով, որ դրանք հոմանիշ ձևեր չեն և իրար չեն կարող փոխարինել: Թեպետ, ինչպես է. Լիտրեն է գրում, մինչև XVII դարը մակբայացած ածականներն ըստ իմաստի չէին տարբերվում - *mont* ածանցով համապատասխան մակբայներից, այլ կերպ ասած՝ *parler bas* և *parler bassement*, *parler haut* և *parler hautement* կապակցությունները հոմանիշներ էին: Հետագայում տեղի ունեցավ դրանց իմաստների տարբերակում:⁹ Այսպես, ժամանակակից ֆրանսերենում *bas* ձևն ունի «ցածրաձայն» նշանակությունը, մինչդեռ *bassement* մակբայը, կրելով իմաստի նեղացում, օգտագործվում է միայն «ստորությանը, ստոր կերպով» իմաստով:

Համանման երևույթ է *haut - hautement* զուգահեռ ձևերի առկայությունը, ուր *hautement* մակբայը գործածվում է «բարձրամտորեն, գոռոզաբար» իմաստով, իսկ սկզբնական «բարձրաձայն» իմաստն արտահայտվում է զուգահեռաբար գործածվող *haut* մակբայական ածականով:

Համեմատելով մակբայների վերոհիշյալ զույգերը, համոզվում ենք, որ այսպես կոչված «կարճ» մակբայները, որոնք բնորոշում են գործողության

⁹ Г. Г. Крылова. К проблеме адвербиализации прилагательных в современном французском языке. Вопросы грамматического строя языка. Сборник научных трудов, вып. 100. Московский гос. пед. ин. языков им. Мориса Тореза, 1976, стр. 104.

արդյունքը, հաճախ զուրկ են փոխաբերական իմաստով գործածվելու հնարավորությունից: Մինչդեռ —*mon* ածանցով ձևերը, բնութագրելով գործողության միջոցը, ունեն գնահատման որոշակի տարր, որը նրանց թույլ է տալիս նաև փոխաբերական իմաստով հանդես գալ:

Վերջապես, համեմատելով ելակետային ածականների և զուգահեռաբար գործածվող գործառական մակբայների իմաստները, համոզվում ենք, որ վերջինները, որպես կանոն, մենիմաստ են և գործածվում են ելակետային ածականների առաջին՝ հիմնական իմաստով: Օրինակ, *cher* ածականն ունի երկու իմաստ. 1) թանկ, թանկարժեք և 2) թանկագին, սիրելի, մինչդեռ գործառական մակբայը մենիմաստ է և նշանակում է թանկ: Օրինակ, *cooter cher* - թանկ արժենալ:

Այսպիսով, ածականների մակբայացումը թեև համեմատաբար նոր, սակայն բավական գործուն բառակազմական երևույթ է ժամանակակից ֆրանսերենում, որը պայմանավորված է վերոհիշյալ միավորների կառուցվածքային, բառա-իմաստային և ռճական առանձնահատկություններով, մի երևույթ, որ արժանի է մանրակրկիտ ուսումնասիրության և վերլուծության: